



Նիկոլայ Կառլենի Հովհաննիսյանը ծնվել է 1964 թվականի օգոստոսի 8-ին Երևան քաղաքում:

1981-ից 1984-ը սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Ֆինանսահաշվարկային ֆակուլտետի Վիճակագրություն բաժնում, ունի Տնտեսագետի որակավորում: 1985-ից 1987-ը ծառայել է Սովետական բանակում:

Բացի վերոնշյալ կրթական հաստատությունից Նիկոլայ Հովհաննիսյանը մասնակցել է մասնագիտական որակավորման բարձրացման մի շարք դասընթացների Հայաստանում և արտերկրում:

1987-1989-ը աշխատել է Գազ. Պետ. կոմիտեի ֆինանսական բաժնում, որպես ավագ տնտեսագետ: 1989-1996-ն աշխատել է Սպանդարյանի շրջանի ֆինանսական բաժնում, որպես ավագ տնտեսագետ, այնուհետև Պետական հարկային տեսչությունում որպես գլխավոր հարկային տեսուչ, երկրորդ կարգի պետական խորհրդական:

1996-ին Եվրամիության «TACIS» ծրագրի շրջանակներում Ֆրանսիական Credit Agricole բանկի, Credit Agricole Consultant խորհրդատվական ծառայության, հոլանդական Rabobank և գերմանական DG-Ագրոպրոգրեսս ընկերությունների հետ համատեղ իրականացվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԱՆԿ» -ի ստեղծման եռափուլ ծրագիրը, որի ընթացքում Նիկոլայ Հովհաննիսյանն աշխատել է որպես Արմավիրի մարզի տարածքային կոորդինատոր:

1996 թվականի մայիսի 1-ից «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԱՆԿ» կոոպերատիվում, ներկայիս «Ակբա» բանկ ԲԲԸ-ում զբաղեցրել է «Արմավիր» մասնաճյուղի պատասխանատուի պաշտոնը:

1999 մարտի 8-ից հանդիսացել է նույն բանկի վարչության անդամ:

Որից հետո նշանակվել է որպես «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԱՆԿ» կոոպերատիվի



«Արմավիր» մասնաճյուղի կառավարիչ: 2000-2006 թվականը եղել է Բանկի խորհրդի անդամ: 07.01.2003-ից Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի գլխավոր տնօրենի տեղակալ: Այնուհետև՝ 09.09.2006-13.07.2015-ը, զբաղեցրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը:

2015 թվականի հուլիսի 13-ից Նիկոլայ Հովհաննիսյանը զբաղեցնում է «Ակբա բանկ» ՓԲԸ-ի Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը: Ամուսնացած է, ունի դուստր և 2 որդի: